ԸՆԿԵՐԱՐԱՆ № 16

Ր. ԿԻՊԼԻՆԳ

ԿՈՏՈՒԿՕ
ԷՍԿԻՄՈՍ ՏՂԱՆ



826
4-50

ՊԱՏՄՈՒԱԾՔ

Էսկիմոսների մասին նեռուծական մի գրքոյկով

Թարգմ. ԴԻԿ. ՍԱՐԳՍԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ն. Ա. Ալանեանցի Գրատ[illegible]

Հրատարակութիւն „ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԱԼՆԵՐ“
Ընկերութեան № 16

30 MAY 2011

Ր. ԿԻՊԼԻՆԳ

ԿՈՏՈՒԿՕ

ԷՍԿԻՄՈՍ ՏՂԱ

ՊԱՏՄՈՒԱԾՔ

Էսկիմոսների մասին նեռածական մի յօդուածով

Թարգմ.
ՆԻԿ. ՍԱՐԳՍԵԱՆ

Յաւելուած „ՀԱՄԿԵՐ“ ամսագրի

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ն. Աղանեանի Պօլիս. 7
1914

Հայկական Գրադարան
Հայ. ССРА
Գրքի Գիտ. Գրադարան
Ազգային Գրադարան
7/XI-1922
Հայ. ССРА Գրքի Գիտ. Գրադարան
Ազգային Գրադարան
Հայ. ССРА Գրքի Գիտ. Գրադարան
Ազգային Գրադարան



Էսկիմոսները ձկունից խրճիթ են շինում։

ԷՍԿԻՄՈՍՆԵՐԸ

Էսկիմոսներն ապրում են Հիւսիսային Ամերիկայում՝ Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսի ափերին, Գրենլանդիայում և մասամբ էլ Ասիայի արևելեան մասում, այսպէս կոչւող Զուկոտեան թերակղզու վրա։

Թէև նրանք ցրւած են այդ հսկայական տարածութեան վրա և ապրում են միմեանցից անջատ-անջատ, այնուամենայնիւ բոլորն էլ համարեա միևնոյն կեանքն են վարում, որովհետև ամեն տեղ էլ ստիպւած են եղել յարմարւելու բնական միևնոյն պայմաններին։ Էսկիմոսների կեանքը ամբողջովին կախւած է ծովային երկու տեսակ կաթնասուն կենդանիներից՝ փոկից և ծովացուլից, որոնց և որսում են. հէնց այդ է

պատճառը, որ նրանք ապրում են բացառապէս ծովափերին և երբէք չեն մտնում երկրի խորքը։ Ամառն էսկիմոսները որսում են հիւսիսային եղջերու, ձուկ, գլխաւորապէս սաղմոն, սակայն նրանց կեանքի գլխաւոր աղբիւրը, ինչ ասել կուզէ, փոկն է։ Փոկի միսը էսկիմոսների ամենասովորական կերակուրն է. փոկի մորթուց նրանք պատրաստում են իրենց համար շորեր ու անկողիններ և պատում են նրանով իրենց բնակարանները. փոկի ճարպը նրանք գործ են ածում մասամբ իբրև կերակուր և մասամբ էլ այրելով՝ տաքացնում ու լուսաւորում են իրենց խրճիթները, աղիքներից էլ պատրաստում են հրաշալի շորեր, որոնց միջով ջուրը չի թափանցում, իսկ ոսկորներից՝ զանազան իրեր ու գործիքներ. փոկի ոսկորները, ծառերից զուրկ այդ երկրներում՝ փայտի տեղ են ծառայում։

Էսկիմոսների հայրենիքում ամառը շատ կարճ է տևում, իսկ ձմեռը, ընդհակառակը, շատ երկար, մօտաւորապէս 9 ամիս։ Էսկիմոսները ամառն անց են կացնում մորթիներով ծածկված վրաններում, իսկ ձմեռը՝ չափազանց տարօրինակ խրճիթներում, որոնց նմանը ոչ մի այլ երկրում չի կարելի գտնել։ Նրանց այդ խրճիթներն ունեն գմբէթի ձև և շինւում են ձիւնէ պինդ աղիւսներից։ Նրանց խրճիթի մուտքը ներկայացնում է մի ձիգ, մօտ երկու սաժէն երկայնութիւն ունեցող միջանցք, որը այնքան ցածր է

լինում, որ սողալով պէտք է նրա միջով անցնել։



Էսկիմոսների ձիւնէ խրճիթը։
Մուտքի առաջ պէտք է լինի մի միջանցք ևս, որը այստեղ չի նկարուած։

Ձիւնէ խրճիթի ներսը նոյնպէս բաւական հետաքրքրական է։ Նրա երկու կողմերում դրուում են երկու օջախներ կամ քարէ մեծ ճրագներ, որոնք ոչ այլ ինչ են, բայց եթէ քարէ երկարաւուն ամաններ, որոնց մէջ այրւում է փոկի ճարպ, պատրոյգի փոխարէն նրանց մէջ դրուած է լինում մամուռ։ Այդ ճրագները միաժամանակ թէ տաքացնում և թէ լուսաւորում են խրճի-



Խրճիթը տանող ձիւնէ միջանցքը։
Այստեղ միջանցքը բաղկացած է երեք տարբեր մեծութեան կամարներ ունեցող մասերից։

թը, և բացի դրանից, դրանց վրա են եփում էս-
կիմոսներն իրենց կերակուրը։ Իւրաքանչիւր ճը-
բաղի վրա կախւած է մի կաթսայ, որի մէջ կե-



Էսկիմոսի խրճիթի ներսը։

Մէջտեղը երևում է մութ մուտքը, որ տանում է դէպի ձիւնէ միջանցքը։ Մուտքի առջևում, խրճիթի միջին մասում յատակը ցածր է, իսկ աջ և ձախ կողմերում՝ բարձր։ Այս բարձր մասերի վրա երևում են երկարաւուն քարէ ճրագներ, իւրաքանչիւր ճրագի շուրջը կան չորս հատ ձողեր, որոնց ծայրերը վերևում միմեանց հետ ամրացրած են հորիզոնական ուղղութեամբ գնացող ձողերով։ Իւրաքանչիւր ճրագի վրա կախւած է կերակուր եփելու համար մի կաթսայ, իսկ կաթսայի վերևում, հորիզոնական ուղղութեամբ գնացող ձողերի վրա ամրացրած է մի ցանց ունեցող օղակ, որի վրա շորեր են չորացնում։ Վերևում երևում է թէ ինչպէս մորթէ առաստաղը պարաններով ամրացրած է ձիւնէ խրճիթի կամարին, բացի դրանից պարզ երևում է նաև առաստաղի ու այդ կամարի միջև եղած դատարկ տարածութիւնը։

բակուր են եփում և ձիւն հալում՝ ջուր ստա-
նալու համար։ Կաթսայից վերև էլ կախւած է
մի օղակ, որի վրա ամրացրած է պարանից կամ
կեաի բեխերից շինւած մի ցանց. այդ ցանցի

վրա են դնում դրսից ներս մտնողներն իրենց
շորերը՝ չորացնելու համար։ Խրճիթի պատերը
ներսից պատած են մորթիներով. ներքևում այդ
մորթիներն ամուր կերպով կպած են լինում պա-
տերին, իսկ վերևում նրանք կախւած են թո-
կերից այնպէս, որ նրանց ու խրճիթի ձիւնէ
կամարի միջև մի որոշ դատարկ տարածութիւն է
մնում. այդտեղ օդը շատ աւելի ցուրտ է լինում,
քան ներքևում, այսինքն խրճիթի ներսում, ո-
րովհետև կամարի գագաթին շինւած է մի անցք
դէպի դուրսը, որի միջով օդը շարունակ ներս
ու դուրս է անում։ Եւ հէնց այդ հանգամանքի
շնորհիւ է, որ խրճիթի ձիւնէ կամարները ներ-
սում վառւող ճրագների արձակած տաքութիւնից
չեն հալւում։ Խրճիթում այնքան տաք է լինում,
որ էսկիմոսները յաճախ հանում են իրենց շո-
րերը և մերկ նստում։

Տղամարդիկ և կանայք գրեթէ միանման են
հագնւում. այն է՝ նախ մորթուց կարած կուռ-
տիկ առանց օձիքի, բայց վեղարանման գլխոցով
և ապա լայն վարտիք, դարձեալ մորթուց կա-
րած. կանանց վարտիքը միացած է լինում կօ-
շիկների հետ, բացի դրանից կանանց կուռտի-
կին մէջքից կպցրած է լինում մի մորթէ քսակ,
որի մէջ դնում են նրանք իրենց փոքրիկ երե-
խաներին։

Ծովի վրա բաւականին երկար ժամանակ
անցկացրած լինելով՝ էսկիմոսները հնարել են

յատուկ որսորդութեան համար մի չափազանց հետաքրքրական կազմութիւն ունեցող նաւակ։ Այդ նաւակը կոչւում է կայակ, որը իսկապէս կարող է համարւել վայրենի մարդու ամենանշանաւոր գիւտերից մէկը։

Նա բաւականին երկար է, մօտ երկու սաժէն։



Կայակը և նրա կմախքը։

Նրա կմախքը բաղկացած է թեթև փայտէ ձողերի կամ երկար ոսկրների մի ամբողջ շարքից. դրսից այդ կմախքը պատած է լինում փոկի մորթով։ Նոյնպիսի մորթով ծածկւած է նաւակը և վերևից, որը նաւակի համար մի տեսակ կտուրի դեր է կատարում։ Կտուրի վրա լինում է միայն մի անցք, որտեղով էսկիմոսը ներս է մտցնում իր ոտքերը և ամուր կերպով կապում անցքի բերանը իրեն հետ այնպէս, որ ջուրը չը կարողանայ նաւակի մէջ մտնել։ Մի ձեռքով նիզակը բռնելով, իսկ միւսով երկբլթակ թիակը՝ էսկիմոսը զարմանալի ճարպկութեամբ ղեկավարում է իր նաւակը և արագութեամբ պատռում ծովային ալիքները նոյն իսկ այնպիսի ուժեղ ալեկոծումների ժամանակ, երբ սովորական նաւակը կարող էր խորտակւել։

Կայակը միայն որսորդութեան ժամանակ է գործադրւում և կոչւում է տղամարդու նաւակ։ Էսկիմոսներն ունին մի այլ տեսակի նաւակ ևս, որ կոչւում է ումեակ (կանանց նաւակ),



«Ումեակ»—էսկիմոսների մեծ նաւակը։

Բագրատ Հայոց Հոգեւորական Դպրոց

շատ աւելի մեծ, քան կայակը։ Այդ նաւակը ծառայում է գլխաւորապէս ընտանիքը և կամ զանազան ծանրութիւններ տեղափոխելու համար։

Ումեակը նոյնպէս ունի փայտեայ կամ ոսկրէ կմախք և պատած է մորթիներով, միայն այն զանազանութեամբ, որ սա կայակի նման վերևից ծածկված չէ, այլ բաց է բոլորովին, ինչպէս սովորական նաւակներն են լինում։ Ումեակի մէջ կարող են տեղաւորել մօտ 20 մարդ։

Ցամաքի վրա ճանապարհորդութիւններ կատարելու համար էսկիմոսներն ունեն թեթև սահնակներ՝ նurstեr, որոնց լծում են շներ։ Ամենալաւ դէպքում այդպիսի սահնակներին լծում են 12 շուն։ Շներից մէկը, սովորաբար ամենից ուժեղը գնում է առջևից և միւսների համար առաջնորդի դեր է կատարում։ Էսկիմոսները շներին շատ վատ են կերակրում, այդ պատճառով էլ նրանք իրենց տէրերի հետ այնքան չեն կապւում։

Էսկիմոսներից շատերը թէպէտ ձեռք են բերել ներկայում եւրոպական հրացաններ, բայց դեռ ևս որսորդութեան ժամանակ նրանց ամենագործածական զէնքերը հին զէնքերն են, այն է՝ աղեղ, նետեր՝ քարէ կամ ոսկրէ սուր ծայրով, նիզակ և երկար հարպունները, որ խրում են նրանք ծովային կենդանիների մարմինը։

Էսկիմոսները շնորհալի ժողովուրդ են։ Նրանց մէջ կան գեղեցիկ գծագրողներ և ոսկրի վրա քանդակողներ։ Էսկիմոսներն իրենց տնային իրերն ու զէնքերը շինում են ոսկրից կամ քարից, որովհետև այն երկրներում, ուր ապրում են

նրանք, ոչ փայտ կայ և ոչ էլ երկաթ. չմոռանանք ասել, որ նրանց իրերի ոսկրային մասերը, օրինակ, դանակների ու աղեղների կոթերը, պատած են լինում գեղեցիկ քանդակներով։

Էսկիմոսները բարի և ուրախ բնաւորութեամբ մարդիկ են, սիրում են երգեր ու հէքիաթներ և ունին իրենց սեփական երգերն ու հէքիաթները։ Նրանց կրօնը շատ նախնական է. նրանք պաշտում են ոգիներ, որոնք կառավարում են բնական ոյժերը և որոնք իրենց ազդեցութեամբ կարող են նրանց թէ օգնել և թէ վնասել։ Չար ոգիների դէմ կռւելու համար ունին նրանք կախարդներ՝ անգեկոկներ, որոնք մեծ յարգանք են վայելում էսկիմոսների մէջ և ունեն մեծ ազդեցութիւն։

Լաբրադոր թերակղզու վրա և Գրենլանդիայում ապրող էսկիմոսներն աւելի քաղաքակրթված են. նրանք ունեն իրենց մայրենի լեզուով գրականութիւնը և որ աւելի զարմանալի է, նրանց մեծ մասը գրագէտ է։ Սակայն այն էսկիմոսները, որոնք ապրում են խոր անկիւններում, մինչև այժմ էլ վարում են դեռ նախնական, կիսավայրենի կեանք. սրանց գոյութիւնը ենթակայ է արդէն բնութեան դաժան պատահականութիւններին կամ վտանգներին։ Անցկացնել ձմեռը առանց քաղցի —ահա էսկիմոսների ամենալուրջ հոգսը։ Երբ որսը յաջող է և փոկի մսի ու ճարպի մեծ պաշար կայ, էսկիմոսներն օրական մի քանի անգամ

են ուտում և ուտում են այնքան, որ այլ ևս անկարող են լինում շարժվել, այդ ժամանակ նրանց ձիւնէ խրճիթի մէջ քարէ ճրագների մէջ բարձր բոցով վառում է ճարպը և լուսաւորում նրանց ուրախ դէմքերը։ Իսկ երբ փոկ չկայ, այն ժամանակ թշուառութիւնը մուտք է գործում էսկիմոսի խրճիթը. այնտեղ ճրագը վառում է շատ աղօտ լոյսով և նրա մօտ նստած դժբաղդ էսկիմոսը սարսափանքով մտածում է ոչ այնքան մօտալուտ քաղցի մասին, որչափ այն մասին, որ շուտով այդ աղօտ լոյսը ևս պիտի մարի իր յարկի տակ և բևեռային գիշերի սառը խաւարը պիտի պատէ իր սնօտիապաշտ հոգին։

Վ. Հ'վով.



Էսկիմոսի նկարած հիւսիսային եղջերուն։



Էսկիմոսը կայակում նստած՝ հարպունը նետում է փոկի վրա։

ԿՈՏՈՒԿՕ-ԷՍԿԻՄՈՍ ՏՂԱՆ

I

—Մի տես է։ Նա արդէն բաց է արել աչքերը. հապա նայիր։

—Վահ, ճիշտ որ։ Դէհ, շուտով փաթաթիր նրան մորթով։ Դրանից պէտք է շատ լաւ շուն դուրս գայ։ Զորրորդ ամիսը նրան անուն կդնենք և կտանք մէկին։

—Ո՞ւմ—հարցրեց Ամորակը։

Կաղլուն աչքերը ման ածեց մորթիներով պատած ձիւնէ խրճիթի ներսը և վերջը կանգ առաւ տասն և չորս տարեկան Կոտուկօի վրա։ Տղան այդ ժամանակ նստած էր անկողնում և ծովացուլի ժանիքից կոճակներ էր կտրտում։

—Նրան ինձ տուր,—ասաց նա հօրը,—և թող նա իմ անունն ունենայ։

Մի լայն ժպիտ լուսաւորեց Կագլուի տգեղ դէմքը, այնպէս որ նրա փոքրիկ աչքերը կուլ գնացին երեսի ճարպային ծալքերի մէջ։ Նա գըլխով արաւ իր կնոջը, մինչդեռ շնիկի մայրը կատաղօրէն յարձակւում էր մարդկանց վրա, որոնք խլել են իրենից իր ձագուկը և հաջում էր այն մորթէ պարկի վրա, որտեղ թաղցրել էին նրան. խեղճը չէր իմանում, որ այնտեղ, փոկի ճարպով լցուած ճրագի բոցի մօտ իր ձագուկը իրեն շատ լաւ է զգում։

Կոտուկօն կարեց իր կոճակը, իսկ Կագլուն վերցրեց կաշուից պատրաստած շների լծասարքի կապոցը և նետեց մեծ սենեակի կողքին գտնուող փոքրիկ խցիկը. ապա հանեց եղջերուի մորթուց կարած իր ծանր որսորդական շորը և դրեց ճրագի վերևից կախուած կետի բեխերից շինած ցանցի վրա ու ձգելով անկողնի վրա՝ սկսեց ծծել սառեցրած մսի կտորը՝ սպասելով ճաշին։ Ճաշը բաղկացած էր սովորաբար եփած մսից ու արիւնի ապուրից։ Կագլուն նոր էր վերադարձել տուն. վաղ առաւօտից սկսած նա փոկ էր որսում տնից ութ մղոն հեռաւորութեան վրա և այժմ վերադարձել էր, հետը բերելով երեք հատ հսկայական մեծութեան սպանած կենդանիներ։

Դէպի խրճիթը տանող ձիւնէ ցածրիկ միջանցքի մէջ լսւում էր շների հաջոց ու կաղկանձիւն. այդ շները լծից նոր ազատուած լինելով՝ հանգստանում էին և տաք անկիւնի համար իրար բուրդ զգում։

Էսկիմոս տղայի շորերը։

Երբ հաջոցն ուժեղացաւ՝ Կոտուկօն դանդաղօրէն տեղից վեր կացաւ և վերցրեց մըտրակը, որի կոթը շինուած էր ճկուն կետի բեխից, իսկ ծայրը՝ բարակ կաշէ թելերի հիւսուածքից։ Նա ուղղեց դէպի միջանցքը, որտեղից լսւում էր այն սարսափելի աղմուկն ու շիւանը։ Շներն այնտեղ պատրաստ էին նրան պատառ-պատառ անելու. սակայն ոչինչ էլ չպատահեց, շները պարզապէս իրենց կերն էին պահանջում և ամեն օր նրանք դրա համար այդպիսի զարհուրելի հաջոց էին բարձրացնում. երբ Կոտուկօն միջանցքից դուրս եկաւ ազատ օդի մէջ, նրա յետևից երևացին կէս դիւժին շների բրդոտ գլուխներ, և երբ նա դիմեց դէպի այն բարձր ձողերը, որոնցից կախկխուած էր շների համար պահուող միսը, շների աչքերը ագահութեամբ հետևեցին

նրան։ Կոտուկօն կարտեց սառած մսի կտորները լայն հարպունով ու մտրակը պատրաստի պահելով՝ վերցրեց մսի կտորները և կանգ առաւ։ Շներին կանչում էր նա անուններով, սկզբում կանչում էր թոյլերին և ապա աւելի ուժեղներին. և վայելելով թեկթեկացրեց առաստաղը պատող մորայն շանը, որ առաջ կանցնէր ոչ իր հերթին՝ ծանր մտրակը կայծակի արագութեամբ կիջնէր նրա վրա և բուրդը կթռցնէր այս ու այն կողմը։

Իւրաքանչիւր շուն բարձրաձայն քրթմնջալով՝ իր հերթին էր սպասում և ապա առաջ անցնելով՝ չանթում էր իր բաժինն ու ագահօրէն կլանելով՝ շտապում կրկին իր ձիւնէ բունը, իսկ Կոտուկօն անշարժ կերպով տեղը կանգնած՝ հիւսիսափայլի շողքերի տակ կատարում էր իր արդար բաժանումը։

Ամենից վերջը մօտեցաւ մեծ սև շունը, լծկան շների առաջնորդը, որը լծւած շների կարգի վրա էր հսկում. դրան Կոտուկօն տուեց մսի աւելորդ բաժինը, բայց չմոռացաւ տալ նաև մտրակի աւելորդ հարւածը։

— Օ՜, — ասաց Կոտուկօն, ոլորելով իր մտրակի կաշէ հիւսւածքը, — այնտեղ, խրճիթի ներսը, ինձ մօտ, ճրագի կողքին քնում է մի հրաշալի շնիկ, երբ նա մեծանայ, պէտք է բոլորից էլ բարձր հաչէ։ Դէհ, ներս մտէք։

Էսկիմոս երեխաների տիկնիկը։

Նա յետ դառնալով մտաւ միջանցքը՝ հրելով այնտեղ հաւաքւած շներին։ Մտնելով խրճիթը՝ վերցրեց պատից կախած կետի բեխից հիւսւած կանգուն մտրակը, սրբեց իր վրայի ձիւնը և ապա նոյն էր թոյլերին և ապա աւելի ուժեղներին. և վայելելով թեկթեկացրեց առաստաղը պատող մորայն շանը, որ առաջ կանցնէր ոչ իր հերթին՝ ծանր մտրակը կայծակի արագութեամբ կիջնէր նրա վրա և բուրդը կթռցնէր այս ու այն կողմը։

Փոքրիկ երեխան, Կոտուկօի կրտսեր եղբայրը, որը թաւալւում էր Ամորակի մէջքին կարած մորթէ պարկի մէջ, ճչում ու հեկեկում էր սարսափելի շողից նեղւելով. իսկ մեծ շունը, շնիկի մայրը, Կոտուկօյի կողքին պառկած՝ յառել էր իր աչքերը ճրագի դեղին բոցի վերևը կախւած փոկի մորթուց կարած քսակի վրա, չէ՞ որ այնտեղ էր գտնւում նրա փոքրիկ ճտաները։

Հանրային գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀԱԽՍՀ—СССР
ք. Մասիսյան
ք. Мясникян
Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ИМЕНИ А. Мясникян
7/XI-1922

Նրանք կատարում էր Ամերիկայի հիւսիսային կողմում, Լաբրադորից և Հուդզոնի ծոցից այն կողմը, Բաֆֆինի երկրի հիւսիսային ափում։ Այդտեղից դէպը ընկնում են արդէն մեզ անյայտ երկրներ, որոնց մասին մենք դեռ ևս ոչինչ չգիտենք, բայց այդ երկրներում էլ ապրում են մարդկային ցեղեր։

Կաղլուն էսկիմոս էր։ Նրա ցեղը, որ բաղկացած էր երեսունից մինչև քառասուն հոգուց,

ապրում էր Տունունիրմիուտ երկրում, այսինք
երկրներից ամենահեռաւորում։ Տարեայ ինն ա
միսը այնտեղ ուրիշ բան չը կայ, բացի ձիւնից
սառուցից, քամուց ու փոթորկից և սարսափել
սառնամանիքից։ Վեց ամիս շարունակ այնտե
արեգակը չի երևում երկնքի վրա և տևական խա
ւարն էլ աւելի անտանելի է դարձնում մարդ
կային կեանքն այդ երկրում։ Ամառը, որ երե
ամիս է տևում, սառնամանիքները լինում են
գիշերները և երբեմն էլ ցերեկները։ Այդ ժամա
նակ լեռների հարաւային փեշերում ձիւնը հալ
ւում է և գետինը ծածկւում է կանաչով։ Փոքրի
թզուկ-ուռենիների վրա երևում են թաւամա
կաւիկներ իսկ ողորմելի դեղուկներն արձա
կում են տերևիկներ ու ծաղիկներ։ Մանր կլոր
քարերը գլորւելով լեռն ի վայր՝ գնում, ընկնում
են բաց ծովը և լեռնաշղթաները ձիւնի տակից
իրենց գլուխներն են բարձրացնում։ Սակայն այդ
բոլորը մի քանի շաբթից յետոյ անհետանում են
և դաժան ձմեռը կրկին իր թագաւորութիւնն է
հաստատում. Ովկիանոսում սառցակոշտերը պա
տում են ջրի մակերևոյթը և շուտով ծովն ու
ցամաքը ծածկւում են սառցէ կեղևով, որի հաս
տութիւնը հասնում է 10 ոտնաչափի։ Այդ ժա
մանակ ծովը դառնում է սառցէ մի ընդարձակ
դաշտ։

Ձմեռը կաղլուն գնում է այդ սառցէ դաշ
տի ամենահեռաւոր ծայրերը և փոկեր որսում,

որոնք այնտեղ դուրս են գալիս սառուցի մակե
րևոյթը՝ թարմ օդ շնչելու։

Գարնանը կաղլուն և իր ցեղակիցները թող
նում են հալւող սառցէ կոշտերը և գնում դէպի
ժայռերով պատած ցամաքը, որտեղ փոկի մոր
թիներից վրաններ են պատրաստում, մէջը պա
տրաստարւում և դարձեալ որսորդութեամբ պա
բապում. որսում են մեծ մասամբ փոքրիկ փո
կեր, որոնք դուրս են գալիս ափը տաքանա
լու. բացի դրանից, նրանք այս ու այն տեղ
թակարդներ են սարքում թռչունների համար։
Այնուհետև անցնում են հարաւ դէպի Բաֆֆինի
երկիրը՝ հիւսիսային եղջերու, նամանաւանդ սաղ
մոն որսալու, որով շատ հարուստ են այդ երկրի
անթիւ գետակներն ու լճակները։ Սեպտեմբերին
կամ հոկտեմբերին նրանք իրենց աւարով տուն
են վերադառնում և այդտեղից կրկին դիմում
դէպի հիւսիսային ափերը՝ փոկ որսալու։ Այդ
ճանապարհորդութիւնը կատարում են նրանք
ճարտաներով, այսինքն սահնակներով, որոնց քա
շողները լծկան շներն են։ Յաճախ նրանք օրա
կան քսան, նոյն իսկ երեսուն մղոն տարածու
թիւն են կտրում այդ սահնակներով։ Երբեմն
էլ նրանք նաւակ են նստում, որ պատած է լի
նում մորթիներով. այդ ժամանակ երեխաներն
ու շները տեղաւորւում են թիավարողների ոտ
քերի մօտ, իսկ կանայք երգեր են երգում, մին
չև որ նաւակը վճիտ ու սառը ջրի ալիքները

կարելով՝ մի հրանդանից գնում, հասնում է մի այլ հրանդանի։

Էսկիմոսներն իրենց գործածելիք իրերի մի մասը ստանում են հարաւից. այսպէս, օրինակ, հարպունների երկաթը, պողպատէ դանակները, թիթեղէ կաթսաները, որոնց մէջ միսը շատ աւելի հեշտութեամբ է եփւում, քան իրենց հին քարէ կճուճների մէջ, ապա հրացանը, լուցկին, կանանց համար դունաւոր ժապաւէնները, փոքրիկ ածանագին հայելիներն ու կաշէ կուռտիկների եզրերը զարդարելու համար կարմիր մահուզը, բոլորը հարաւից են ստանում։ Կադլուն այդ իրերի փոխարէն տալիս է միաժանի դելֆինի ձիւնի պէս սպիտակ թանկագին ոսկր կամ մշկայծեամի ատամներ, որոնք իսկական մարգարիտից պակաս արժողութիւն չունեն։ Այդ երկիրը ապրանք են բերում ծախելու հարաւային էսկիմոսները, որոնք հիւսիսում հաւաքած իրենց թանկարժէք իրերը վաճառում են այնուհետև կետորսներին կամ միսիոներներին, որոնք երբեմն-երբեմն ոսք են դնում էսկիմոսների ցուրտ երկիրները։ Այդպէս ապրանքը մէկ ձեռքից միւսն է անցնում. յաճախ է պատահում, որ նաւային խոհարարի՝ Նիւ-Եօրկում գնած կաթսան իր գոյութեան վերջը գտնում է հեռաւոր հիւսիսում՝ էսկիմոսի օջախի վրա։

Կադլուն շատ ճարպիկ որսորդ էր, և այդ էր պատճառը, որ նրա տանը կարելի էր գտնել

թէ երկաթէ հարպուններ, թէ պողպատէ դանակներ, թէ նիզակներ և թէ այլ շատ բաներ, որոնք անհրաժեշտ են համարւում այդ երկրում ապրելու համար։ Նա մի ցեղի պետ էր, կամ, ինչպէս իրենք են ասում. «ամեն բան փորձած մարդ» էր։ Նա շատ բարի էր և իր իշխանութիւնից չէր օգտւում, միայն երբեմն-երբեմն առաջարկում էր իր ցեղակիցներին փոխել իրենց որսորդութեան վայրերը։ Նրա որդի Կոտուկօն էլ փոքրիկ էսկիմոսների պարագլուխն էր, երբ նրանք լուսընկայ գիշերները հաւաքւում են գնդակ խաղալու կամ գեղեցիկ հիւսիսափայլերին՝ երգեր երգելու։

Ոսկրից շինած սպիտակ արջ (էսկիմոսի գործ)։



Էսկիմոսների ամառային վրանները։

III

Կոտուկօի տասն և չորս տարին լրացել էր արդէն և նա իրեն հասունացած էր համարում։ Նրան ձանձրալի էին թւում թռչունների համար թակարդներ սարքելու կամ փոկի մորթիները տրորելու ժամանակ՝ կանանց օգնելու հասարակ աշխատանքը, նրան գրաւում էր որսորդութիւնը, այն զբաղմունքը, որ ունեն տղամարդիկ։ Նա ցանկանում էր ներկայ լինել երգերի տանը՝ «կուագգիում», որտեղ հաւաքւում են որսորդները և ուր կախարդը, «անգեկոկը», ճրագները մարելուց յետոյ՝ իր երգերով սարսափ էր ազդում նրանց վրա։ Որսորդներն այդ ժամանակ լսում են, թէ ինչպէս Հիւսիսային Եղջերուի Ոգին դոփում է կտուրը և երբ նրանք մեկնում են իրենց

նիզակները ցուրտ գիշերւայ խաւարի մէջ, նիզակները պատում են տաք արիւնով։ Կոտուկօն այլ ևս չէր կարող սպասել այն օրւան, երբ ինքը ևս կունենայ իր սեփական ձիւնէ խրճիթը և կարող կը լինի իր մեծ կօշիկները հանելով՝ շպրտել հրագի վերևում կախւած կետի բեխից պատրաստած ցանցի մէջ և կամ կարող կը լինի խաղալ որսորդների սիրած խաղը, այն է թիթեղէ բանալի մէջ մեխ նետել։

Ահա այդ էր պատճառը, որ Կոտուկօն չափազանց ուրախացաւ, որ հայրը նէիրեց իրեն հոքրիկ շնիկին։ Էսկիմոսը ոչ մի պայմանով շուն չի տայ իր որդուն, եթէ նա դեռ ևս չգիտէ սահակն ու շներին ղեկանարել. իսկ Կոտուկօն այդ ողմից իր ուժերի վրա վստահ էր արդէն։

Եթէ շնիկը երկաթէ առողջութիւն չունեար, երբէք չէր կարող տանել խրճիթի շոգն ու այն առատ կերը, որ տալիս էր նրան Կոտուկօն։

Կոտուկօն պատրաստել էր նրա համար կաշէ բարակ անրափոկ և քշում էր նրան սենեակի մէջ՝ բարձր բղաւելով.

—Աուա, եա աուա (դէպի աջ)։

—Զայօ, չօյ, եա չօյա, չօյ (դէպի ձախ)։

—Օխախա (կանգնիր)։

Այդ բանը շնիկին դուր չէր գալիս, բայց եղճի բանը աւելի վատացաւ, երբ լծեցին նարային։

Նա հանգիստ կերպով նստում էր ձիւնի

վրա և խաղում այն կաշէ թելի հետ, որը մ
ծայրով կապված էր նրա անրափոկի հետ՝ իս
միւս ծայրով՝ այն հաստ կաշէ պարանին, որ
փոխարինում էր լծափայտին։ Իսկ երբ բոլո
լծկանները շարժւում են ու հողմի արագութեան
առաջ սլանում՝ մեր շնիկը թէպէտ մէջքի վր
զգում էր անրափոկի ամբողջ ծանրութիւնը, բա
տեսնելով իր առջևում սլացող շներին՝ ինքը
ստիպված՝ վազում էր իր ամբողջ ուժով. այ
բանը դիտելով Կոտուկօն՝ այնպէս էր ծիծաղու
որ աչքերից արտասուք էր հոսում։ Այդպէս
ները անցնում էին իրար յետևից և շնիկը հ
տրզհետէ աւելի ու աւելի լաւ էր ծանօթանու
այն մտրակի հետ, որ երբեմն-երբեմն կայծակ
պէս գիտէր հարուածներ հասցնել։ Նրան հանգիս
չէին տալիս և միւս շները, որոնք շարունակ կ
ծոտում էին նրան, որովհետև նա չէր կարող
նում կանոնաւոր վազել ու յաճախ խանգարու
էր կարգը։ Ծանր լծասարքը նրան գրգռում է
այդ դեռ բաւական չէ, նրան այլևս թոյլ չէ
տալիս քնել Կոտուկօի մօտ, և նա ստիպված գ
շերում էր սառը ձիւնէ միջանցքում, ուր շնե
նրան տաքուկ մասերում թոյլ չէին տալիս տ
բռնելու։

Մի խօսքով շնիկը շատ ծանր օրեր էր ա
բում։

Կոտուկօն նոյնպէս սովորում էր. չէ՞ որ սա
նակ ղեկավարելն այնքան էլ հեշտ բան չէ։ Ի

բաքանչիւր շուն ունի իր առանձին անրափոկը.
ուժեղ շներին լծում են առջևում, իսկ թոյլե-
րին՝ յետևում։ Անրափոկին միացրած է լինում
մի երկար թել, որն անցնելով շան առջևի ձախ
ոտքի տակով՝ գնում է դէպի հաստ պարանը,
որը փոխարինում է, ինչպէս տեսանք, լծափայ-
տին։ Բարակ թելի ծայրին շինուած է մի անցք,
որ մէր են տալիս հաստ պարանի վրա գտնուող
կոճակին և որը հանած ժամանակ՝ վայրկենապէս



Էսկիմոսների շան լծասարքը։

շունը ազատւում է։ Այդ բանը շատ մեծ նշա-
նակութիւն ունի, որովհետև լծին դեռևս չըն-
տելացած ջահել շները յաճախ վայր են ընկնում
և այն ժամանակ թելը ընկնում է նրանց յետևի
ոտքերի արանքն ու ոտը կտրում մինչև ոսկրը.

այդպիսի դէպքերում պէտք է իսկոյն և եթ նրանց ազատել։ Երբեմն էլ պատահում է, որ շները չաբանում են ու սկսում իրար հետ կռուել. այդ ժամանակ նրանց թելերն այնպէս են խճճւում, որ նրանց միմիանցից բաժանելու համար մեծ վարպետութիւն է պահանջւում։ Շատ մեծ գործ է կատարում և մտրակը, եթէ գիտես այն, ի հարկէ, կարգին գործածել։ Իւրաքանչիւր էսկիմոս երեխայ պարծենում է մտրակ գործածելու մէջ իր ունեցած հմտութեամբ. մտրակով ձիւնին զարկելը, խօսք չկայ, շատ հեշտ է, բայց մտրակն օդի մէջ շարժել ու մեղաւոր շան վրա իջեցնել հէնց այն ժամանակ, երբ սահնակը հողմի արագութեամբ առաջ է սահում, դա արդէն ամեն մարդու գործ չէ։ Երբ բղաւում ես մի շան վրա և կանչում նրա անունը, բայց սխալմամբ մտրակով մի այլ շան ես խփում, այն ժամանակ այդ շները սկսում կռուել իրար հետ և մինչև նրանց հանդարտեցնում ես, միւսներն են կանգ առնում։ Երբեմն էլ պատահում է, որ ճանապարհին սկսում ես խօսել ընկերոջդ հետ, կամ ընկերդ սկսում է մի երգ երգել, շներն իսկոյն և եթ կանգ են առնում, և դառնալով դէպի սահնակը՝ նստում են ու ականջ դնում։

Կոտուկօն յաճախ էր ընկնում փորձանքների մէջ, երբեմն նա մոռանում էր սահնակը կանգնեցնելու համար կարճ ձողը ձիւնի մէջ խրել, երբեմն էլ պոկում էր կաշէ թելն ու փչացնում

ծափայտը։ Բայց վերջը շներ կառավարելուն նա այնքան վարժւեց, որ արդէն վստահանում էին տալ նրան թեթև սահնակ՝ ութը լծկան շներով։ Կոտուկօն շատ էր պարծենում իր հմտութեամբ և իր սահնակով արագ կերպով սլանում



Էսկիմոսը սողալով մօտենում է փոկերին։

էր հարթ ձիւնի վրայով։ Նա գնում էր ամբողջ տասնեակ մղոններ դէպի այն վայրերը, ուր սովորաբար ապրում էին փոկերը։ Մօտենալով այդ տեղերին՝ նա սկսում էր մտրակել սև շանը, որ լծկան շների մէջ ամենախելօքն էր ու նրանց առաջնորդը։ Շունը հոտոտելով գտնում էր այն անցքերը, որտեղով դուրս էին գալիս փոկերը՝ թարմ օդ ծծելու։ Կոտուկօն հետևում էր նրան և երբ անցք էր տեսնում, իսկոյն շուռ էր տալիս սահնակը և եղջերուի եղջիւրը ձիւնի մէջ խրելով՝ սահնակը տեղը ամրացնում էր, որպէս զի շները չփախչեն՝ իրենց յետ տանելով և սահնակը։ Ապա սողալով մօտենում էր անցքին և

մեծ համբերությամբ սպասում փոկի դուրս գալ-
լուն։ Երբ փոկը դուրս էր գալիս, նա իսկոյն
եթ նիզակի մի ուժեղ հարված էր հասցնում
նրան և կամ բռնում թոկով ու յետոյ քաշ տա-

Էսկիմոսը հարպունը նետում է փոկի վրա։

լով՝ մոտեցնում սահնակին և դնում նրա վրա։
այդ գործում սև շունը օգնում էր նրան։ Հէնց

որ փոկը դնում էր սահնակի վրա, շները սկսում
են յուղել ու ոռնալ։ Կոտուկոն այդ ժամանակ
մարակով այնքան էր ծեծում նրանց, որ նրանց
դուունչը կարմրում էր։ Աւելի դժուարը տուն վե-
րադառնալն էր։ Ծանր սահնակը դժուարությամբ
էր սահում սառուցի անհարթ մակերևոյթի վրա-
յով և երբ տեղ-տեղ կանգ էին առնում, շները
նստում էին ու իրենց քաղցած աչքերը ձգում
փոկի վրա։ Բայց հէնց որ մոտենում են իրենց
բնակությեան տեղին, այն ժամանակ շները սկսում
են գլուխները ցած գցել, պոչերը ցցել և արա-
գությամբ վազել. իսկ Կոտուկոն երգում էր
բարձր ձայնով վերադարձող որսորդի երգը՝

—Անգուտիվուն տաի-նա, դաուն-նէ տայ-
նա։

Այդ երգի վրա ձիւնէ բոլոր հիւղերից մար-
դիկ դուրս էին սողում ու բարձր ձայնով ող-
ջունում նրան։

Սամոյեդների ընտանիք, իրենց սահնակի ու շների հետ։

IV

Երբ Կոտուկո-շունը մեծացաւ, այլ ևս այ
պէս վատ չէր ապրում։ Նա միւս շների հե
կուռելիս միշտ յաղթանակ էր տանում, մի ա
գամ մինչև անգամ կերի բաժանման ժամանա
յաղթեց նոյն իսկ շների առաջնորդին՝ սև շա
և Կոտուկոն այդ տեսնելով՝ սև շան առաջին տե
յատկացրեց նրան։ Այդ օրւանից յետոյ Կոտո
կո-շունը դարձաւ շների առաջնորդ և միշտ հի
ոտնաչափով առաջ էր գնում։ Դէպքեր էր պ
տահում, որ նրան կերակրում էին խրճիթո
եփած մսով և երբեմն էլ թոյլ էին տալիս նրա
քնելու հէնց այնտեղ, որտեղ քնում էր Կոտո

կոն։ Այդպիսով փոքրիկ շնիկից դուրս եկաւ մի հրաշալի որսորդական ու արագավազ շուն. նա այնքան քաջ էր, որ երկիւղ չէր կրում մինչև անգամ բևեռային նիհար գայլից, բոլոր շների վրա սարսափ ազդող այդ գազանից։

Երբ որսի էին գնում, օրերով ու գիշերներով Կոտուկոն ու իր շունը միասին էին լինում, մնացած շները բոլորովին մոռացել էին։ Ամբողջովին մորթիների մէջ փաթաթւած Կոտուկոն ու իր վայրենի, երկարամազ շեկակարմիր շունը դարձել էին արդէն անբաժանելի ընկերներ։

Էսկիմոսի ամբողջ հոգսը ընտանիքի համար միս ու մորթիներ գտնելն է։ Կանայք մորթիներից շորեր են կարում և երբեմն էլ թակարդներով փոքրիկ կենդանիներ որսում, իսկ տղամարդիկ զբաղւում են մեծ կենդանիներ որսալով։ Էսկիմոսները չափից դուրս շատակեր են, այդ պատճառով ստիպւած են շատ որս անել։ Երբ որսը անյաջող է անցնում ընտանիքը քաղցի է մատնւում, իսկ երբ որս բոլորովին չեն գտնում՝ ամբողջ ընտանիքը սովամահ է լինում։

Սակայն էսկիմոսը շատ անհոգ է, նա շատ չի մտածում սովամահ լինելու վտանգի մասին։ Կաղլուն ու Ամորակը, Կոտուկոն ու իր փոքրիկ եղբայրը, որ թաւալւում էր մորթէ պարկէ մէջ և առաւօտից մինչև երեկոյ սառած ձկան ճարպի կտորներ էր ծծում, իրենց նոյնքան երջանիկ էին զգում, որչափ երջանիկ կարող էր զգալ իրեն

ամեն մի ընտանիք երկրագնդիս այլ մասերում։
Էսկիմոսները շատ բարի և մեղմ մարդիկ են, բար-
կանում են շատ հազվագիւտ դէպքում և երբէք
երեխաներին չեն ծեծում, բացի դրանից նրանք
չգիտեն, թէ ինչ բաներ են ստախօսութիւնն ու
գողութիւնը։ Երբ նրանք իրենց ցուրտ ու դա-
ժան երկրում իրենց համար անհրաժեշտ կերա-
կուրը կարողանում են գտնել, շատ զոհ են լի-
նում, և այդ ժամանակ նրանց դէմքը փայլում
է երջանկութիւն արտայայտող ժպիտով, նրանք
իրենց երկար գիշերները անց են կացնում այդ
դէպքում ոգիների ու կախարդուհիների մասին
տարօրինակ հէքիաթներ պատմելով և ուտում
են այնքան, որ չեն կարողանում այլ ևս որև է
բան կուլ տալ։ Իսկ կանայք երգում են իրենց
անվերջ երգը. «Այմէ այա, այա ամնա, ա, ա»
դրա հետ միասին նորոգում են շորերն ու որ-
սորդական պարագաները ճրագի տակ, որ այր-
ւում է երկար ու մութ օրերին։

Սակայն մի անգամ վրա հասաւ մի դաժան
ու սարսափելի ձմեռ և մահւան անողորմ ուրվ-
ականը ցցւեց նրանց առաջ։ Տունտունիրը
միւտ երկրի ժողովուրդը սաղմոնի սովորական
որսից յետ դառնալով՝ նոր սառուցի վրա շինել
էր ձիւնէ խրճիթներ և պատրաստւում էր փոկի
որսի դուրս գնալու, հէնց որ ծովը սառչի։ Բայ-
ւշունը շատ ցուրտ էր ու սոսկալի։ Սեպտեմբե-
րի ամբողջ ընթացքում կատաղի փոթորիկներ էին

տեղի ունեցել, որոնք կոտրտելով ծովափնեայ
ջարակ սառուցները՝ հաւաքել կուտակել էին
ափի վրա և առաջ բերել մի բարձր պատնէշ,
լայնութիւնը քսան վերստի էր հասնում։
Դա մի սարսափելի պատնէշ էր, որով անկարելի
էր անցնել. ամենուրեք սրածայր սառցէ կոշտեր
էին ցցւած, շները չէին կարողանում նրանց
վրայով առաջ շարժւել։ Սառուցի այն վայրը,
ուր փոկերը ձմեռը ձուկ են որսում, ընկած էր
սառցէ այդ պատնէշից այն կողմը, իսկ Տունտունիր-
միուտի երկրի բնակիչներից և ոչ մէկը պատնէ-
շից այն կողմը չէր կարողանում անցնել։ Էսկիմոս-
ներն արդէն նախապատրաստւել էին ձմեռը անց
կացնել քաղցի տառապանքի մէջ, որովհետև նրանց
ննդի միակ պաշարը կազմում էին սառեցրած
ելդին ու ձկան ճարպը։ Ահա հէնց այդ ժամա-
կներում որսորդներից մէկը մի վրանի մէջ
տաւ կիսասառած դրութեան մէջ երեք կին և
մէկ աղջիկ։ Դրանց տղամարդիկ, ինչպէս երե-
ւում է, միաժամանի դելֆին որսալու էին գնացել
և այլ ևս չէին վերադարձել, հաւանօրէն զոհ
գնալով փոթորիկներին։ Ի՞նչ պիտի անէր կաղ-
ուն։ Նա երկար չմտածեց, բերել տւեց նրանց
և տեղաւորեց գիւղի խրճիթներում. պէտք է
ասել, որ էսկիմոսը երբէք չի մերժում ապաս-
տան տալ օտարին, որովհետև ինչ գիտէ ինքը,
թէ վաղը հերթը իրեն չի հասնի ուրիշից օգնու-
թիւն խնդրելու։

Ամորակը աղջկան, որ մօտ տան և չոլ
տարեկան կլինէր, վերցրեց իրեն մօտ։ Նրա գլ
որածայր յարդաբանքից ու եղջերուի մորթ
կարած սպիտակ շորերի վրայի մանր նաշխեր
երևում էր, որ նա Էլլէսմիր երկրի բնակչու
է. նա իր կեանքում դեռ ևս չէր տեսել թիթեղ
կաթսաներ ու փայտից շինած սահնակի ձողե
Կոտուկօն ու իր շունը շուտով մտերմացան նր
հետ։ Բոլոր աղէէներն արդէն հարաւ էին գնա
ցել, գնացել էր նաև կուղիբը, այդ միշտ հն
րագէտ կենդանին և Կոտուկօի թակարդը այլ
կենդանի չէր ընկնում։ Այդ ժամանակ երկ
որսորդ էլ մշկայծեամի որսի գնացած ժամանա
մեռել էին, այդ դժբաղդ դէպքը Էսկիմոս աղ
մարդու աշխատանքը աւելի ևս ծանրացրել
Կոտուկօն ամեն օր իր թեթև սահնակին վ
կամ եօթ ուժեղ շուն լծած որսի էր դուրս գալ
և նայում հեռուն, իզուր տեղը յոյս ունենալ
թէ կըտեսնէ այն սառցէ դաշտը, որտեղ փոկել
անցքեր են բաց անում՝ մաքուր օդ շնչելու համա

Կոտուկօ-շունը թափառում էր առա
յոգնութիւն զգալու և սառցէ հարթութեան մ
ռելային լռութեան մէջ լսում էր նրա աղեկտ
ոռնոցը. նա երեք մղոն հեռաւորութեան վրայ
զգում էր փոկի անցքի ուր լինելը, կարծես թ
այդ անցքը մի քանի քայլի վրա լինէր։

Երբ շունը անցք էր գտնում, Կոտուկօն շո
տով ձիւնից մի պատ էր կանգնեցնում՝ բն

ուային սարսափելի հողմերից պաշտպանելու
համար և նրա յետևը նստում տասը, տասներկու
և երբեմն էլ քսան ժամ անընդհատ, սպասելով
փոկի դուրս գալուն և աչքը չէր հեռացնում այն
հազիւ նկատելի նշանից, որ շինում էր նա ուղ-
ղակի անցքի մօտ, որպէս նշան՝ հարպունով խը-
փելու համար։ Կոտուկօն այդ ժամանակ իր ոտ-
քերը պինդ փաթաթում էր փոկի մորթու մէջ,
որովհետև ցրտից պաշտպանելու համար դա
միակ միջոցն էր։ Եւ երբ վերջապէս փոկը դուրս
էր գալիս, Կոտուկօն սպանում էր նրան իր հար-
պունով. իսկ նրա շունը մօտ էր վազում ու օգ-
նում իր տիրոջը կենդանուն սահնակի վրա
դնելու ժամանակ, մինչդեռ միւս շները յոգնած
և քաղցած՝ հողմից պաշտպանելու համար որ և
սառցէ թմբիկի յետևը մտած՝ բոլորովին չէին
հետաքրքրւում, թէ այնտեղ ինչ է կատարւում։

Բայց այդ փոկը երկար չէր դիմանում, ո-
րովհետև գիւղում ուտողների թիւը շատ էր և
բոլորն էլ սնունդ էին պահանջում։ Այդ ծանր
ժամանակներում փոկի և ոչ մի մասը դէն չէին
ձգում, ուտում էին թէ միսը, թէ ջլերը և թէ
կաշին։ Այն մասերը, որ առաջ շներին էին տա-
լիս, այժմ բոլորն էլ մարդկանց համար էր պահ-
ւում. Ամորակը իր շների վոհմակին կերակրում
էր հին վրանի կաշիներով, որոնք դարսած էին
իրար վրա խրճիթի նստարանների տակ։ Եւ շները
քաղցից շարունակ հաջում էին, գիշերներն ան-

գամ նրանք քաղցից արթնանում էին ու կրկին հաջում։

Էսկիմոսը սպասում է փոկի դուրս գալուն։

Խրճիթներում վառող ճրագներն անգամ գուշակել էին տալիս, որ քաղցի ուրուականը հե-

տզհետէ մօտենում է։ Լաւ ժամանակներում, երբ մեծ քանակութեամբ փոկի ճարպ կայամբարած՝ քարէ նեղլիկ ճրագների մէջ կրակը շատ ուժեղ կերպով է վառւում, երբեմն նրա բոցը կէս արշինից աւելի բարձրութիւն է ունենում և առատ լոյսը տարածում խրճիթի մէջ. այդ ժամանակ խրճիթը թէ լոյս է լինում, թէ տաք և թէ հաճելի։ Իսկ այժմ բոցը վեց դիւիմից աւելի չէր բարձրանում։ Ամորակը ամեն անգամ, երբ բոցը աւելի էր բարձրանում, կռանում էր ճրագի վրա և նորից իջեցնում և այդ ժամանակ ընտանիքի բոլոր անդամների աչքերը հետևում էին նրա ձեռքի շարժումներին։

Սովամահ լինելու երկիւղը այդ ցուրտ երկրում այնքան մեծ չէ, ինչքան խաւարի և մահուան սարսափը անթափանց մթութեան մէջ։ Բոլոր էսկիմոսները վախենում են խաւարից, որ ցած է իջնում նրանց վրայ երկնքից վեց երկար ամիսներ շարունակ. ուստի և երբ նրանց խրճիթներում ճրագները հանդչում են, մարդիկ սարսափից ուղղակի շշմում են։

Ինչքան ժամանակը առաջ էր սահում, այնքան դրութիւնը աւելի վատանում էր։ Քաղցած շները հաջում ու քրտնջում էին իրենց ձիւնէ բների մէջ. նրանք գիշերները դուրս էին գալիս բներից և նայելով սառը ու հեռաւոր աստղերին՝ հոտոտում էին սառը օդը և երբ նրանց հաջոցը վերջանում էր, մի ճնշող լռութիւն էր պատում

երկրին և մարդիկ զգում էին, թէ ինչպէս իրենց քունքերում արիւնը շարժւում է ու բաբախում իրենց սիրտը։

V

Կոտուկօ-շունը մի անգամ մռայլ քայլում էր՝ լծասարքը վրան, յանկարծ մէկ էլ այն տեսան, որ մօտեցաւ նա իր տիրոջը ու սկսեց գլխով խըփել նրա ծնկներին։

Կոտուկօն այդ տեսնելով՝ սկսեց փայփայել նրան, բայց նա առանց դադար առնելու շարունակում էր գլխով խփել և պոչը պտտեցնել։ Այն ժամանակ Կոտուկօն բարձրացրեց նրա մեծ և գայլի գլխի նմանող թաւամազ գլուխը ու նայեց նրա ապականման աչքերին։ Շունը վզգվզգաց, կարծես թէ այդ հայացքը նրան սարսափեցրեց և սկսեց Կոտուկօի ծնկների արանքում դողդողալ։ Յետոյ մազերը ցցեց, մռմռած, ինչպէս այդ անում են շները, երբ նրանց մօտենում է մի օտար մարդ, ապա սկսեց ուրախ հաջել, այս ու այն կողմը գնալ ու բռնել Կոտուկօյի ոտքից, ճիշտ այնպէս, ինչպէս անում էր նա դեռ ևս փոքրիկ շնիկ եղած ժամանակ։

—Ի՞նչ է եղել սրան,—հարցրեց Կոտուկօն և սկսեց վախենալ նրանից։

—Նա հիւանդ է,—պատասխանեց Կաղլուն.

Շունը բարձրացրեց դունչը և սկսեց ոռնալ։

—Ես դեռ նրան այդպէս չեմ տեսել,—ասաց Կոտուկօն։—Սրա վերջը ի՞նչ պէտք է լինի։

Կաղլուն ուսերը վեր քաշեց, բարձրացաւ տեղից և դիմեց խրճիթի հանդիպակաց անկիւնը, որտեղից կախուած էր կարճ հարպունը։

Հիւանդ շունը նայեց նրան, ոռնաց ու կամացուկ ուղղուեց դէպի խրճիթի ելքը։ Միւս շները նրան ճանապարհ ուին անցնելու, նա միջանցքից դուրս սողաց և բաց օդի մէջ սկսեց բարձրաձայն հաջել, կարծես մշկայծեամի հետք զգացած լինի ու արագ կերպով առաջ վազեց. քիչ անց նա արդէն անհետացաւ մթութեան մէջ։ Նա ջրվախութիւն չունէր, այլ պարզապէս կատաղել էր քաղցից։ Քաղցը, ցուրտն ու խաւարը նրան խելքից հանել էին. դա մի հիւանդութիւն էր, որ շուտով վարակում է և միւս շներին։ Երկրորդ օրը նոյն ձևով հիւանդացաւ մի այլ շուն, և Կոտուկօն ստիպուած եղաւ սպանել նրան, որովհետև նա խածում էր արդէն։ Վերջը մեծ սև շունը, լծկան շների առաջնորդը ևս յանկարծ մի այնպիսի ձայն հանեց, որ կարծես թէ հիւսիսային եղջերուի հետք որոնելիս լինէր, և երբ նրան ազատեցին հաստ պարանից, լծասարքը վրան սկսեց արագ կերպով փախչել։ Այդ դէպքից յետոյ ոչ ոք չէր վստահանում շներին դուրս հանել։

Բոլորը սարսափի մէջ էին. այդ դեռ բաւական չէ, պառաւ կանայք սկսել էին սարսա-

փելի աւանդութիւններ պատմել և հաւատացնում էին, թէ գիւղի վերջը մօտեցել է։

Կոտուկօին ամենից շատ վշտացնում էր իր սիրելի շան կորուստը. քաղցը նրան այնքան էլ չէր նեղում, որովհետև էսկիմոսը, ճիշտ է, թէպէտ շատ շատակեր է, բայց տեղն ընկած ժամանակը դիմանում է և երկարատև ծոմի։ Սակայն մի կողմից վիշտը, միւս կողմից էլ քաղցը, խաւարն ու ցուրտը և ծանր աշխատանքը նրան արդէն ուժասպառ էին արել։ Նա սկսել էր արդէն զառանցել. նա լսում էր ինչ որ ներքին ձայներ և տեսնում էր մարդկային կերպարանքներ, որոնք իրականութեան մէջ գոյութիւն չունէին։

Այդ դրութեան մէջ մի անգամ Կոտուկօն գիշերով որսից դատարկաձեռն տուն է վերադառնում՝ թոյլ ու յոգնած. ճանապարհին երբ նա յենւում է մի քարի, որ պահւում էր ժայռի սառցապատ մակերևոյթի վրա, քարը պոկւում է։ Կոտուկօն վախենում է ու սկսում վազել. վազելիս նա լսում է, որ քարը իր յետևից գլորւում է ճրթճրթոցով ու սուլոցով։

Այդքանը արդէն բաւական էր Կոտուկօին։

Նա մանկութիւնից լսել էր, որ ամեն մի ժայռի և ամեն մի մեծ քարի մէջ ապրում է մի ոգի, ինուա, և որ այդ ոգին նման է մի աչքանի կնոջ ու կոչւում է Տորնակ։ Երբ Տորնակը կամենում է օգնել որևէ մարդու, իր բարձրութիւնից գլորւում է ուղղակի նրա խրճիթը և դառնում նրա հովանաւորը։ Կոտուկօն լսում է, իր քունքերում ինչ որ ձայն և համոզւում է, որ դա Տորնակն է խօսում իրեն հետ։ Երբ տուն դարձաւ, նա արդէն հաւատացած էր, որ Տորնակը իրեն հետ խօսել է։

—Նա ասաց ինձ. «Ես ցած կիջնեմ իմ բարձունքներից»։—Բղաւեց Կոտուկօն և նրա աչքերը փայլեցին։

—Նա ասաց. «Ես կուղեկցեմ քեզ»։ Նա ասաց. «Ես քեզ կտանեմ դէպի փոկի անցքերը»։ Ես վաղը կերթամ և նա ինձ կուղեկցի։

Երբ կախարդը՝ անգեկոկը, ներս մտաւ խրճիթը, Կոտուկօն նրան ևս պատմեց այն, ինչ որ տեսել էր։

—Հետևիր նրան և մեզ համար ուտելու բան գտիր,—ասաց անգեկոկը։

Հիւսիսային երկրի աղջիկը պառկած էր կրակի մօտ. վերջին ժամանակները նա սակաւակեր ու սակաւախօս էր դարձել։ Միւս օրը, առաւօտեան, երբ Կաղլուն ու Ամորակը Կոտուկօին ճանապարհ դցելու պատրաստութիւնը տեսել վերջացրել էին՝ աղջիկը դուրս եկաւ խրճիթից, կանգնեց Կոտուկօի կողքին և աշխուժով բռնեց սահնակին կապած թոկից։

—Ձեր տունը նաև իմ տունն է,—ասաց նա և այդ ժամանակ փոքրիկ սահնակը ճռնչաց և

առաջ շարժվեց բևեռային գիշերվայ սարսափելի խավարի մեջ։

Էսկիմոսների ընտանիքը։

—Այդպես,—ասաց Կոտուկոն։—Բայց ես կարծում եմ, որ մենք կընկնենք Սեդնայի մոտ։

Սեդնան սանդարամետների թագուհին է։ Էսկիմոսների կարծիքով մեռած մարդու հոգին մի ամբողջ տարի մնում է նրա մոտ և ապա միայն անցնում երջանիկ Կուդլիպարմիուտը, այն հրաշալի վայրը, ուր երբէք սառնամանիքներ չեն լինում և ուր ամենուրեք եղջերուներ են արածում։

Կոտուկոն պնդում էր, որ Տորնակը իրեն հրամայել է գնալ դէպի հիւսիս. ուստի և նրանք դիմեցին դէպի հիւսիս և առաջին իսկ օրը գնացին հինգ մղոն։

Աղջիկը լուռ էր, գլուխը խոնարհած. նրա գլխարկի կուզխի մորթին իջել էր նրա լայն ու թուխ դէմքի վրա, կարծես մի ծոպաւոր ժապաւէն։ Երկինքը մութ էր, գրեթէ սև, որպէս մի սև թաւիշ. հորիզոնի վրա նա փոքր ինչ կարմրաւուն էր և խոշոր աստղերն այնտեղ պսպղում էին ջահերի նման։ Երբեմն-երբեմն երկնքի վրա փայլում էին հիւսիսափայլի կանաչաւուն ճաճանչներ, նրանք յանկարծակի բռնկւում էին և կրկին անհետանում. երբեմն-երբեմն էլ ասուպներ էին ընկնում և թողնում իրենց յետևից փայլուն հետքեր։ Այդ վայրկեաններին Կոտուկոն ու աղջիկը կարողանում էին տեսնել սառուցի մակերևոյթի անհարթութիւնները. այդ ժամանակ այս ու այնտեղ փայլում էին կարմիր, դեղին ու կապոյտ լոյսեր, բայց յետոյ մութը կըրկին տարածւում էր ամենուրեք և սառուցի մակերևոյթը ստանում էր նորից իր սովորական գորշ գոյնը։

Աշնանային փոթորիկները սառցակոյտերը կուտակել էին իրար վրա և առաջ բերել փո-

սեր, խոր կիրճեր ու բարձր սառցային ժայռեր՝ ծածկված անցեալ տարեայ սառուցի կտորներով։ Հեռուից այդ այս ու այն տեղ ցրված սառցային կոշտերը նմանում էին փոկերի, երբեմն էլ շուռ եկած սահնակների և երբեմն էլ մարդկանց սառած մարմինների։ Նրանց կարելի էր նմանեցնել և Սպիտակ Արջի տառնոտնեայ ոգուն, սակայն շուրջը տիրում էր այնպիսի մեռելային լռութիւն, որ այդ բոլոր երևակայութիւնները շուտով մարում էին։

Այդ լռութեան ու խաւարի մէջ Կոտուկօն ու աղջիկը ուրուականների նման առաջ էին շարժւում՝ քաշելով իրենց յետևից սահնակը։

Երբ նրանք յոգնում էին, Կոտուկօն ձիւնից մի որսորդական հիւղ էր պատրաստում, այնքան փոքրիկ, որ երկուսով հազիւ հազ սողալով ներս էին մտնում. այնտեղ նրանք ճրագը վառում էին և աշխատում էին սառեցրած միսը փոքր ինչ տաքացնել։ Հետևեալ առաւօտեան նրանք կրկին ճանապարհ էին ընկնում և օր էր պատահում, որ անցնում էին երեսուն մղոն, բայց այդպիսի դէպքում նրանք միայն հինգ մղոն էին առաջ գնում, որովհետև ուղիղ գծով առաջ գնալ անկարելի էր, ուստի և նրանք ստիպված էին անդադար իրենց ճանապարհը այս ու այն կողմը ծռել։

Աղջիկը լուռ էր, բայց Կոտուկօն երգեր էր երգում և երբեմն էլ խօսում էր։ Նա ասում էր, թէ լսում է Տորնակի ձայնը. երբեմն նա վազելով բարձրանում էր մի սառցէ բլուր, ձեռքերը շարժում և բարձր ձայնով ինքն իրեն խօսում։ Աղջիկը հաւատում էր, որ Տորնակը խօսում է նրա հետ և երբէք չէր զարմանում, երբ Կոտուկօն ասում էր, թէ Տորնակը երկգլխանի շան կերպարանքով գալիս է իրենց յետևից։ Աղջիկը նայեց դէպի այն կողմը, ուր ցոյց էր տալիս Կոտուկօն և տեսաւ իսկապէս, որ ինչ որ մի գզգզված մազերով բան յանկարծակի երևաց ու կրկին աներևոյթացաւ կիրճի մէջ։



Ձկան համար լողան—էսկիմոսի գործ։

VI

Նրանց սպասում էր մի ինչ որ սարսափելի բան՝ բևեռային ձմեռային փոթորիկ. այս փոթորիկը տևում է տասը օր և վայ նրան, ով որ գիւղից հեռու մի տեղ նրա ճանկը կընկնի, նրա մահը անխուսափելի է։ Կոտուկօի պաշարը քչացել էր արդէն, մի շաբաթ հազիւ թէ բաւականութիւն տայ։ Նա սկսեց ձիւնի խրճիթ շինել և աշխատում էր շուտով ծածկել կտուրը, քանի դեռ քամիները չեն սաստկացել։ Եւ երբ սահնակը մսի հետ ներս տարաւ ու կտուրի վերջին մասերն էր պատրաստում, յանկարծ կէս վերստի վրա գտնուող մի ժայռի վրա տեսաւ մի սարսափելի բան։ Օրը ամպամած էր և Կոտուկօին թւաց, թէ դա մի սոսկալի մեծ հրեշ է անասելի երկայնութիւն ունեցող պոչով և անճոռնի ու ահագին գլխով։

Աղջիկը նոյնպէս տեսաւ այդ հրէշը, բայց նա սարսափից լաց չեղաւ, այլ հանդիստ կերպով ասաց.

- Դա Կուիկվերնն է.

—Նա խօսում է ինձ հետ,—ասաց Կոտուկօն, և այն դանակը, որով հարթեցնում էր ձիւնը, դողաց նրա ձեռքում։

Կվիկվերնը, դա հսկայամարմին, անատամ և մազերից բոլորովին զուրկ շան ոգին է. այդ շունը, էսկիմոսների ասելով, ապրում է ամենահեռաւոր հիւսիսում և երևում այն ժամանակ, երբ մարդկանց մահ է սպառնում։ Կախարդներն անգան վախենում են նրա անունը յիշել։ Կվիկվերնը ունէր ութ, նոյն իսկ տասը ոտք։ Եւ այն հրէշը, որ ցատկոտում ու պտոյտներ էր գործում Կոտուկօի և աղջկայ աչքերի առաջ՝ սառը մառախուղի մէջ, նոյնպէս աւելի ոտքեր ունէր, քան սովորական շունը։

Նրանք շուտով թագնուեցին խրճիթի մէջ. Կվիկվիրնը, իհարկէ, նրանց կարող էր մի վայրկեանի մէջ պատառ-պատառ անել, բայց այժմ նրանց որոշ չափով պաշտպանում էին ձիւնէ հաստ պատերը. բացի դրանից, նրանք այդտեղ կարող էին կրակ անել և ազատուել խաւարից։ Խրճիթից վերև փոթորիկը ոռնում էր ու սուլում. նրա սուլոցը բոլորովին նման էր երկաթուղու գնացքի սուլոցին. ամբողջ երեք օր փոթորիկը այդպէս ոռնում ու սուլում էր անընդհատ։ Խրճիթի մէջ Կոտուկօն ու աղջիկը նստած տաքանում էին կրակի մօտ ու կրծում սառեցրած մսի կտորներ. նրանք միայն երկու օրւայ պաշար ունէին. այդ պատճառով Կոտուկօն սկսեց գնել իր հարպունի երկաթէ ծայրը, սահնակն ու նիզակը և պատրաստւում էր որսի դուրս գընալու, որովհետև այլ ևս ուրիշ բան չէր կարելի անել։

Մենք շուտով կերթանք Սեդնայի մօտ,—ասաց աղջիկը։—Միթէ Տորնակը մեզ համար ո-

չինչ չի պիտի անի։ Դէհ, մի երգ երգիր, որ-պէսզի նա մեզ մօտ գայ։

Կոտուկօն մի կախարդական երգ երգեց։ Թւաց, թէ քամին հանդարտուեց։ Երգի մէջ տե-

Էսկիմոս տղայ։

ղում աղջիկը տեղից վեր թռաւ, կռացաւ, թաթ-պաններով պաշապանուած ձեռքը դրեց սառցէ յատակի վրա և ապա ականջը մօտեցրեց նրան։ Կոտուկօն հետևեց նրա օրինակին և երկուսը սկսեցին լարուած ականջ դնել՝ միմեանց աչքի նայելով։

Դրանից յետոյ Կոտուկօն թակարդից պո-կեց կետի բեխերից մի բարակ շերտ և ամրաց-րեց խրճիթի առաստաղին։ Կետի բեխի այդ շեր-տիկը ճիշտ կողմնացոյցի սլաքի պէս հազիւ նկա-տելի մի ճօճում կատարեց, ապա կանգնեց և կրկին սկսեց ճօճուել։

—Որ և է տեղ հեռուում պոկուեց սառցէ մի կոշտ,— ասաց Կոտուկօն։

Աղջիկը գլխով բացասական նշան արեց։

—Ոչ, այդ ծովն է բացուում, ասաց նա։— Հապա, լսիր, թէ սառոյցը ինչպէս է ճրթճրթում։

Նրանք կրկին կռացան և սկսեցին ականջ դնել։ Օտարոտի ու խուլ ձայն էր լսւում սառցէ յատակի տակից։ Մերթ թւում էր, թէ օձախի մօտ մի փոքրիկ շնիկ է վազվզում, մերթ էլ այնպիսի ձայն էր լսւում, կարծես թէ քարերը քերում են սառուցը և մերթ էլ մի խուլ թըմ-բուկի ձայն էր լսւում։ Այդ ձայները հաւանօ-րէն գալիս էին բաց ծովի հեռաւոր ափերից։

—Մենք չենք գնայ Սեդնայի մօտ,— ասաց Կոտուկօն։— Ծովը բացուում է։ Բայց Տորնակը մեզ խափեց։ Մենք պիտի մեռնենք։

Եւ իսկապէս նրանց շատ լուրջ վտանգ էր սպառնում։ Երեք օր տևող փոթորիկը Բաֆֆինի ծոցից մի հսկայական ալիք վերցրած՝ բերել թա-փել էր սառցէ դաշտի վրա։ Ուժեղ հոսանքը բե-րել էր այստեղ լողացող սառուցների ահագին կոյտեր, որոնք զարկւում էին սառցէ դաշտի

հետ հէնց այն ժամանակ, երբ հսկայական ալիքները ճնշում էին նրան վերևից և ցնցում ներքևից։ Եւ այն, ինչ լսում էին Կոտուկօն ու աղջիկը, երեսուն կամ քառասուն մղոն հեռաւորութեան վրա կատարւող սառուցի ու ջրի միջև տեղի ունեցող այդ սոսկալի պայքարի միայն թոյլ արձագանգներն էին. և կեսի բեխի բարակ շերտիկը դողում էր սառցային ամբողջ տարածութեան այդ ցնցումներից։

Երբ սառուցը արթնանում է իր երկարատև ձմեռային քնից, ոչ ոք չի կարող ասել, թէ ինչ կարող է պատահել, որովհետև նա փոփոխում է իր կերպարանքը նոյնպիսի արագութեամբ, ինչպիսի արագութեամբ որ ամպերն են փոփոխւում երկնքում։ Փոթորիկը հաւանօրէն աւետում էր անակնկալ գարնան գալուստը։

Ոսկրից շինած փոկ (էսկիմոսի գործ)։

VII

Կոտուկօն ու աղջիկը փոթորկի ամբողջ ընթացքում մնացին խրճիթի մէջ և երբ փոթորիկը դադարեց, դուրս եկան խրճիթից և իրենց ճանապարհը շարունակեցին դէպի առաջ։ Հորիզոնի վրա ձայները քանի գնում, այնքան սաստկանում էին. չորս կողմը պինդ սառուցը հևում ու մնքում էր։

Սառցէ սարի գագաթին նստած էր այն ութոտանի հրէշը, որին տեսել էին նրանք առաջին անգամ փոթորկից առաջ։

Հրէշը սարսափելի էր։

— Գնանք նրա յետևից, — ասաց աղջիկը, — գուցէ նա մեզ ազատի։

Նա այնքան էր թուլացել, որ երերաց, և հազիւ հազ բռնեց սահնակի թոկից։ Հրէշը կամացուկ շարժւում էր դէպի արևմուտք և նրանք հետևում էին նրան, բայց ձայները հետզհետէ աւելի ու աւելի էին սաստկանում։ Սառուցը ճաքճաքում էր ամեն ուղղութեամբ. սառուցի հսկայական կոշտերը ճնշում էին իրար, իսկ ներքևից ճնշում էր ջուրը։ Ծովը ահագին աղմուկով անթիւ անհամար սառուցի կտորներ էր նետում սառցային դաշտի տակը, ճիշտ այնպէս, ինչպէս մարդիկ խաղաթղթերը արագութեամբ ածում են սփռոցի տակը։ Եւ այնտեղ, ուր ջուրը շատ խորը չէր, այդ սառուցի կտորներն այնքան էին կու-

տակէն, որ ծայրը հասել էր արդէն յատակին։ Եւ այդ դեռ բաւական չէ. ուժեղ հողմն ու հոսանքը հիւսիսից, Գրենլանդիայի կողմից, բերում էին դեռ սառցէ մեծամեծ լեռներ։ Դրանք առաջ էին լողում փրփրադէզ ալիքներն պատռելով և կարծես մի-մի առագաստանաւ շարժւում էին դէպի սառցային դաշտը։ Բայց ահա մի հրսկայական սար կանգ առաւ, երերաց, շուռ եկաւ, փշրւեց և անհետացաւ փրփուրի մէջ՝ ամեն կողմ ցալքուններ շաղ տալով։ Նրա յետևից սակայն եկաւ մի ուրիշ սար, նրանից քիչ փոքր ու ցածր. սա արդէն բարձրացաւ սառցային դաշտի վրա՝ իր շուրջը բոկորներ ցրելով. խրոխտօրէն նա առաջ շարժւեց՝ պատռելով սառցային դաշտը մի ամբողջ վերստ տեղ, մինչև որ որևէ բանի դէմ ընկնելով՝ կանգ առաւ։

Այդպէս ամեն տեղ սառուցի կոշտերն իրար հրում էին, ճնշում և կոտրտւում ու շրջւում։

—Այսպիսի բան ես երբէք չեմ տեսել,—ասաց Կոտուկօն՝ սարսափահար աչքերով շարժւող սառուցը դիտելով։—Բայց չէ՞ որ դեռ ծովի բացւելու ժամանակը չէ։ Այս ինչու են կոտրտւում սառցակոշտերը։

—Գնանք նրա յետևից,—բացականչեց աղջիկը, ցոյց տալով առջևից վազող հրէշին։

Նրանք ուժասպառ լինելով քարշում էին սահնակը և քանի գնում էին, այնքան աւելի ու

աւելի լաւ էր լսւում շարժւող սառուցի ճրթ-ճրթոցը։ Վերջապէս ամբողջ սառցային դաշտը սկսեց դողալ ու ճրթճրթալ. նրանց շուրջը բացւեցին ճեղքւածքներ, գայլի բերանների նմանող ճեղքւածքներ։ Հրէշը կանգ առաւ սառցէ սարի վրա։

Կոտուկօն յուսահատ ճիգեր գործ դնելով՝ մաղլցեց սարը, քաշելով իր յետևից աղջկանը և այդտեղից էլ սողալով անցաւ դէպի անշարժ պատնէշի սառրոտը։

Սառցակոշտերի ձայնը քանի գնում աւելի ու աւելի ուժեղանում էր, բայց դեռ պատնէշը անշարժ էր իր տեղը, դա մի ամուր, գրանիտեայ փոքրիկ կղզի էր, աւազոտ ափերով։ Այժմ վտանգը նրանումն էր, որ սառցակոշտերը կարող էին ափ դուրս գալ և սահել կղզու վրայով. սակայն Կոտուկօն ու աղջիկը իրենց չկորցրին։ Նրանք արագութեամբ իրենց համար ձիւնից մի փոքրիկ տնակ շինեցին, մտան մէջը ու սկսեցին ագահօրէն մսի կտորները կրծել ու լսել ափ դուրս եկող սառուցի ճրթճրթոցը։

Հրէշը այլևս չէր երևում։ Կոտուկօն նկատելով այդ՝ յուզւած կերպով ասաց աղջկան, որ ինքը վանում է ոգիներին։ Աղջիկը լսելով նրա խօսքերը՝ սկսեց յանկարծ հրհռալ ու յետ ու առաջ ճօճւել։

Նրա յետևում, ձիւնէ միջանցքի անցքի մէջ երևացին երկու դնչեր, մէկը սև, միւսը

կարմրաւուն։ Դրանք երկու երկչոտ ու վշտոտ շների դնչեր էին։ Այդ շները կամացուկ ներս առղացին խրճիթը։ Նրանցից մէկը Կոտուկօն էր, միւսը՝ սև շունը, շների աւաջնորդը։ Նրանք այժմ

Էսկիմոս կանայք և երեխաներ։

կուշտ էին երևում, ունէին բաւականին լաւ տեսք և երբէք չէին նմանում կատաղած շների, բայց նրանք մի շատ զարմանալի կերպով կապուած էին իրար։ Երբ սև շունը Կաղլուի խրճիթից փախաւ, իր վրա տարել էր իր լծասարքը. ինչպէս երևում է, նա որև է տեղ հանդիպել էր Կոտակօին և կուռել նրա հետ, որովհետև նրա լծասարքի ուսի հանգոյցը ընկել էր Կոտուկօի պղնձէ վզնոցը և այնպէս էր ձգուել, որ նրանցից ոչ մէկը չէր կարող կրծել կաշէ պարանը ու կտրել, ուստի կապուել էին նրանք իրար այնպէս, որ կլուխները միմիանցից հեռացնել չէին կարոանում։ Այդ դրութեան մէջ նրանք որս էին գըտել, կերել, իրենց քաղցը յագեցրել և խելքները տեղը բերել։ Այժմ նրանք միանգամայն առողջ էին։

Աղջիկը նրանց հրեց դէպի Կոտուկօն և ծիծաղելով ու հեկեկալով ասաց բարձր ձայնով.

— Ահա Կվիկվերնը, որ մեզ ցոյց տուեց ամուր գետինը։ Տես, նա ունի ութը ոտք և երկու գլուխ։

Կոտուկօն կտրեց նրանց միմեանց կապկըպող թելերը և երկու շները, թէ սկը և թէ կարմրաւուանը ուրախագին ձայներ արձակելով՝ յարձակուեցին նրա վրա, կարծես թէ ուզում էին պատմել նրան իրենց գլխով անցած-դարձածը։ Կոտուկօն ձեռքով շոշափեց նրանց և տեսաւ, որ նրանք բաւական գիրացել են։ Մի ժպիտ անցաւ նրա դէմքի վրայով։

— Նրանք իրենց համար կերակուր են գըտել. — ասաց նա։

— Մենք այլ ևս Սեղնայի մօտ չենք գնայ։

Նրանց մեզ օգնութեան է ուղարկել քո Տոր-նակը։ Նրանք արդէն առողջացել են։

Իրարից բաժանուած շները. թէև այնքան երկար ժամանակ իրար հետ վազել ու իրար հետ որս էին արել, յարձակուեցին միմեանց վրա և սկսեցին իրար կրծոտել։

— Քաղցած շները չեն կուռում, — նկատեց Կոտուկօն։ — Նրանք անպայման փոկ են գտել։ Մենք կարող ենք հանգիստ քնել, վաղը մենք ևս որս կգտնենք։

VIII

Երբ նրանք արթնացան և խրճիթից դուրս եկան, տեսան որ ծովը կզզու հիւսիսային ափերի մօտ մաքրուել է արդէն և պոկուած սառցէ կտորները շպրտուելով ալիքներից՝ ընկել են ցամաքի վրա։ Ծովային ալեկոծութեան առաջին ձայները էսկիմոսն ուրախութեամբ է լսում, որովհետև նրանք գարնան մօտալուտ գալուստն են աւետում։ Կոտուկօն այդ տեսնելով՝ բռնեց աղջկայ ձեռքը ու ժպտաց։

Սառցակոշտերի արանքներում ծածանուող ալիքների ձայները յիշեցնում էին սաղմոնները, հիւսիսային եղջերուներն ու կանաչագարդ հովիտների անուշ բուրմունքը։ Բայց հենց այն ժամանակ, երբ նրանք դիտում էին ծովը, այնքան ցուրտ էր, որ լողացող սառցակոշտերի արանքում ծածանուող ալիքները կրկին սառչում էին. սակայն հորիզոնի վրայ նրանք տեսան լոյսի մի երկար ու կարմիր շերտ, այդ արեգակն էր, որ դուրս էր գալիս երկարատև ձմեռային խաւարից յետոյ։ Բայց այդ լոյսը մարեց շուտով, կարծես արեգակը յօրանջեց միայն իր երկարատև քնից յետոյ։ Ինչ ուզում է լինի, մի բան անկասկած էր արդէն, որ ձմեռայ վերջը մօտ է և ընութիւնը վերակենդանանում է։ Քիչ անց, Կոտուկօն տեսաւ իր շներին մի փոկի վրա կռուելիս։ Այդ առաջին փոկն էր, որ նրանք տե-

սան, միևնոյն օրը ափ դուրս եկան քսանից մինչև երեսուն ուրիշ փոկեր, իսկ դրանից յետոյ ջրի մակերևոյթի վրա երևացին հարիւրաւոր փոկերի սևիկ գլուխներ։ Ինչքան էլ քաղցր լինէր թարմ փոկի միսը և ինչքան հաճելի լինէր բերնէ բերան թանձր իւղով լցուած ճրագի՝ երեք ոտնաչափ բարձրութեամբ արձակուող բոցը դիտելը, այնուամենայնիւ Կոտուկօն այդտեղ երկար մնալ չէր կարող. նա ուզում էր, ինչքան կարելի է, շուտ տուն վերադառնալ։ Այդ պատճառով էլ՝ երբ սառուցը ամրացաւ Կոտուկօն ու աղջիկը սահնակը փոկի թարմ մսով բարձեցին, շներին լծեցին և ամենայն արագութեամբ սլացան դէպի տուն։ Ճանապարհին շատ ցուրտ էր. բայց նրանք տուն էին վերադառնում հարուստ աւարով, ուստի այդ ցուրտը նրանց համար զգալի չէր։ Շները հոտոտելով բռնել էին դէպի տուն տանող ճիշտ ճանապան, նրանք ևս ուրախ էին և վազում էին այնպէս, ինչպէս երբէք՝ իրենց կեանքում։ Երկու օրից յետոյ նրանք մօտեցան Կագլուի գիւղին, շների ուրախ հաչոցին միայն երեք շուն պատասխան տուեցին. մընացածներին արդէն մորթել, կերել էին։

Խրճիթներում լոյսը շատ աղօտ էր, բայց երբ Կոտուկօն բղաւեց.—Օյօ (եփած միս), ամեն տեղից թոյլ ձայներ լսեցին. այնուհետև հարց ու փորձից Կոտուկօն տեղեկացաւ, որ իր բոլոր ցեղակիցները դեռ կենդանի են։

Քիչ անց Կագլուի տանը բոլոր ճրագները վառեցին, ձիւնաջուրը տաքացաւ և առաստաղից հալուող ձիւնից սկսեց ջուրը կաթկթել։ Ամորակը ճաշ պատրաստեց ամբողջ գիւղի համար։ Օջախի շուրջը շուտով բոլորեցին որսորդները ու սկսեցին ուտել ճաշը մի չտեսնուած ախորժակով։ Կոտուկօն ու աղջիկը այդ ժամանակ պատմում էին իրենց ճանապարհորդութեան մասին։ Նրանց արանքում նստած էին երկու շները և երբ խօսակցութեան ժամանակ մէկն ու մէկը նրանց անունը յիշում էր, նրանք բարձրացնում էին իրենց մի ականջը ու արտայայտում յուզմունքի նշաններ։

—Այդպէս Տորնակը մեզ չմոռացաւ,—ասաց Կոտուկօն։—Փոթորիկը մոնչաց, սառուցը ճաքճքեց և փոկերը փոթորկից սարսափած ձկների յետևից դուրս սողացին։ Փոկերի նոր անցքերը այստեղից շատ հեռու չեն, երկու օրում հեշտութեամբ կարելի է հասնել նրանց։ Ես այնտեղ ձիւնի մէջ թաղել եմ քսան և հինգ հատ փոկի մարմիններ, լաւ որսորդները թողէք վաղը գնան այնտեղ և բերեն։

—Իսկ դու,—հարցրեց կախարդ անդեկոկը։

Կոտուկօն նայեց աղջկան և ասաց.

—Մենք մեզ համար տան տեղ կընտրենք։ Այս ասելով նա գլխով ցոյց տուեց Կագլուի խրճիթի հիւսիս արևմտեան կողմը, որովհետև ա-

մուսնացող տղաները իրենց նոր խրճիթը շինում են հայրական տան այդ կողմում։

Աղջիկը գլուխը շարժեց և ձեռքերի ափերը դարձրեց դէպի վեր։ Նա օտար է եղել, նրան ընդունել են խղճահարելով և նա այժմ ոչինչ չունի իբրև օժիտ։

Այդ ժամանակ Ամորակը իր նստած տեղից վեր ցատկեց և արագութեամբ աղջկայ առաջ ածեց տեսակ-տեսակ իրեր՝ քարէ ճրագներ, մորթիներ քերելու երկաթէ քերիչներ, երկաթէ կաթսաներ, եղջերուի մորթիներ և պողպատէ սուեղներ. իրեր, որոնք այդ ցուրտ երկրում աղջկայ համար ամենահրաշալի օժիտը կարող են կազմել։ Աղջիկը այդ տեսնելով՝ խոնարհեց մինչև գետին։

—Եւ այս երկուսը,—բացականչեց ծիծաղելով Կոտուկօն և ցոյց տուեց շներին։ Շները ցատկեցին աղջկայ վրա և իրենց սառը դունչները կպցրին նրա դէմքին։

—Ո՜հ,—ասաց անգեկոկը հպարտութեամբ, որ ամբողջ ժամանակը խորասուզուած էր մտքերի մէջ։—Երբ Կոտուկօն մեզ թողեց, ես գնացի «երգերի տունը» և կախարդական երգեր երգեցի։ Բոլոր գիշերներին ես երգեր եմ երգել և խնդրել հիւսիսային եղջերուի զօրաւոր ոգու օգնութիւնը։ Իմ երգերի շնորհիւ է փոթորիկը բարձրացել, կոտրտել սառուցը և երկու շները դարձեալ իմ երգերի շնորհիւ են ազատել Կոտուկօին՝

654

նրան պինդ ցամաքը ցոյց տալով։ Իմ երգերն են փոկերին սառուցի մակերևոյթը դուրս հանել։ Իմ մարմինը, ճիշտ է, այստեղ է եղել, բայց իմ հոգին սաւառնելիս է եղել սառցէ դաշտերի վրա և նա է առաջնորդել Կոտուկօին ու շներին։ Բոլորը կատարել է իմ շնորհիւ։

Կուշտ ուտելուց յետոյ բոլորի քունը տանում էր, ուստի և ոչ ոք չկամեցաւ կախարդին հակաճառել։ Եւ անգեկոկը կաթսայից եփած մսի մի կտոր ևս վերցնելով՝ կերաւ և պառկեց միւսների հետ միասին այդ տաք ու պայծառ լոյսով լուսաւորուած ճիւնէ տան մէջ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Личная библиотека
7/XI-19
именная, Мясн
Ա. ՄԱՍԻՍՅԱՆ

„ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խմբագրութեամբ «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

1. *Գատցուկ—Ամիրան Դարեջանիձէ, փոխ. Ա.Թ. Խնկոյեանի* . . . . . 25 կ.
2. *Սէյրի—Դերձակի աշակերտը, վոդեվիլ.* . 10 »
3. *Աղէէն ու պուտուկը, Ոսկի ձկնիկ, Պսակ—պսակ—պատկերազարդ հեքիաթներ* . 10 »
4. *Ս. Գալաչեան — Կապիկներ, բնագիտական զրոյց* . . . . , . 10 »
5. *Մարկ Տէն—Մահուան օղակը. պատմուածք, թարգմ. Մ. Թաւաքալեանի* . . 7 »
6. *Կ. Ստանիւկովիչ—Պտիկ նաւաստին. պատմուածք, թարգմ. Սիմակի* . . . 5 »
7. *Մարզար Աւետիսեան—Երեք խրատ. Պղնձէ քաղաքի զրոյցներից* . . . 20 »
8. *Լ. Սէտոն-Տոմպսոն—Վինիպեգի գայլը. պատմուածք հերոս կենդանիների կեանքից, թարգ. Սիմակի* . . . . . 20 »
9. *Լ. Պրայս եւ Զ. Ջիլբերտ—Առասպելական հերոսներ. թարգմ. Գ. Իփէկեան* . . 20 »
10. *Ռուբէն Գաբրիէլեան—Ովկիանի թագաւորը. կէտի մասին, բնագիտական զրոյց* . 10 »
11. *Մարդակերի աղջիկն ու խորհրդաւոր վարպետը. Իտալական հեքիաթ. Ռուսերէնից թարգմ. Յովհ. Թումանեան* . . 10 կ.

550

12. Յ. Բ. Բաբայեան—Նոր ընկերուհի, Մանկական պիէս, մէկ արարածով։ . 10 »
13. Գ. Մեսեան—Ոսկեպոզը, արևելեան աւանդութիւն . . . . . 10 »
14. Փր. Փոկս—Մի ժամայ նախարարը, պատմուածք թարգմ. Ա.Թ. Խնկոյեանի . 15 »
15. Զիպոն և Պիպոն . . . . . 25 »
16. Ռ. Կիպլինգ—Կոտուկիս, պատմուածք թարգմ. Նիկ. Սարգսեան . . . . . 15 »

Դիմել «Հասկերի» խմբագրութեան. Тифлисъ,
редакція „Аскеръ“.

ՀՀ Ազգային գրադարան
NL0376653

„ՍԻԼ[illegible] ԿՍՏ[illegible]

695

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ[illegible]

Խմբագրութեամբ «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

1. Գատցուկ—Ամիրան Դարեջանիձէ, փոխ. Աթ. Հոկոյեանի . . . . . [illegible] կ.
2. Սէյրի—Դերձակի աշակերտը, վոդեվիլ. . . [illegible] »
3. Աղուէսն ու պուտուկը, Ռոսկի ձկնիկ, Գասկ պսակ—պատկերազարդ հեքիաթներ . 10 »
4. Ս. Գալաչեան—Կատիկներ, բնագիտական գրոյց . . . . . 10 »
5. Մարկ Տէն—Մահուան գաղը. պատմուածք, թարգմ. Մ. Թաւաքալեանի . . 7 »
6. Կ. Ստանիսլավսկի—Գաբիկ աղուաստին. պատմուածք, թարգմ. Սեբաստի . . . [illegible] »
7. Մարգար Աւետիսեան—Երեք խրատ. Պղնձէ քաղաքի գրոյցներից . . . 20 »
8. Ի. Սէտոն-Տոմպսոն—Վիսիպեդի գայլը. պատմուածք հերոս կենդանիների կեանքից, թարգ. Սիմակի . . . . . 20 »
9. Լ. Պրայս եւ Զ. Ջիլբերտ—Առասպելական հերոսներ. թարգմ. Գ. Իսէկեան . . 26 »
10. Լուսէն Գաբրիէլեան—Ոսկեանի թագաւորը. Կէտի մասին, բնագիտական գրոյց . 10 »
11. Մարդակերի աղջիկն ու խորհրդաւոր վարպետը. Իտալական հեքիաթ. Ռոսարէնից թարգմ. Յովհ. Թումանեան . . 10 կ.
12. Ղ. Բ. Բաբայեան—Նոր ընկերուհի, Մանկական պիէս, մէկ արարածով . . 10 »
13. Գ. Մեսեան—Ոսկեպոզը, արեւելեան աւանդութիւն . . . . . 10 »
14. Վիր. Փոկս—Մի ժամայ նախարարը, պատմուածք թարգմ. Աթ. Հոկոյեանի . 15 »
15. Զիպոն և Պիպոն . . . . . 25 »
16. Ռ. Կիպլինգ—Կոտուկ. պատմուածք թարգմ. Նիկ. Սարգսեան . . . . . 15 »

Դիմել „Հասկ" խմբագրութեան. Тифлисъ, редакція „Аскеръ".

ԳԻՆԸ [illegible] 15 ԿՈՊԵԿ